"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 932-Լ

«03» օգոստոսի 2022 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՇԱՃ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժա) ենթակետով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 6-րդ ենթակետով և նպատակ ունենալով բարձրացնելու Թատրոնի հանդիսատեսի սպասարկման որակը, ինչպես նաև ապահովելու հանդիսատեսի հետ շփվող աշխատողների պատշաճ արտաքին տեսք՝

հրամայում եմ.

1. Սահմանել, որ.

1) հանդիսատեսի ավագ օգնականը, հանդիսատեսի օգնականները, հսկիչները/մուտքի անցակետի/, տոմսարկղի գանձապահները, ընդհանուր բաժնի գործավար Ն. Ղալեչյանը պարտավոր են աշխատանքային ժամերին կրել Թատրոնի կողմից իրենց հատկացված սպիտակ վերնաշապիկ, որի դիմերեսի ձախ կողմում պատկերված է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի վերևից պատկերը, որը խորհրդանշում է «օպերա» բառի «Օ» տառը: Պատկերի աջ կողմում հայերեն լեզվով գրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆ», կամ անգլերեն լեզվով գրված է «ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE» ,

2) բեմի մեքենավարների ծառայության աշխատակիցները, թատերական լուսավորության ծառայության աշխատակիցները և էլեկտրատեխնիկական ծառայության աշխատակիցները պարտավոր են աշխատանքային ժամերին կրել Թատրոնի կողմից իրենց հատկացված սև շապիկ, որի դիմերեսի ձախ կողմում պատկերված է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի

վերևից պատկերը, որը խորհրդանշում է «օպերա» բառի «Օ» տառը: Պատկերի աջ կողմում հայերեն լեզվով գրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆ», կամ անգլերեն լեզվով նշված է «ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE», իսկ հետևի մասում նշված է համապատասխան ծառայության անվանումը:

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված աշխատակիցները պարտավոր են կրել սպիտակ գույնի բեյջ, չափսը՝ 9սմ X 13 սմ, որի վրա նշված է համապատասխան աշխատակցի անունը և պաշտոնը:

2. Հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժնին՝ սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատակիցներին ապահովել շապիկներով կամ վերնաշապիկներով, ինչպես նաև բեյջերով:

3. Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո այդ մասին սահմանված կարգով գրավոր տեղեկացնել Թատրոնի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին:

4. Թատրոնի «Հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի» բաժնին՝ երկօրյա ժամկետում սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

Թատրոնի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ **Կ. Դուրգարյան**

«03» օգոստոսի 2022 թ.
ք. Երևան